

**Կենսաբանություն, I ՓՈԻԼ**  
**տևողությունը 60 րոպե**  
**9-րդ դասարան**

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

Յուրաքանչյուր թեստում առաջարկվում է 4 պատասխան: Ընտրեք միայն մեկը, որը, ըստ Ձեզ, առավել ճիշտ է և ամբողջական:

**1.Ստորև բերված բույսերից ո՞րն է երկտուն:**

1. – գնարբուկը
2. – դդումը
3. – մասրենին
4. – չիչխանը

**2.Ստորև բերված բույսերից ո՞ր բույսի արական բջիջները չունեն մտրակներ:**

1. – մարշանցիա
2. – լամինարիա
3. – ջրաշուշան
4. – ուլոտրիքս

**3. Ստորև բերված մակաբույծ որդերից ո՞րի համար մարդը վերջնական տեր չէ:**

1. – եզան երիզորդ
2. – խոզի երիզորդ
3. – ասկարիդ
4. – էլիինոկոկ

**4.Լրիվ կերպարանափոխությամբ միջատներ են .**

1. – թաղանթաթևերը, երկթևանինները
2. – թեփուկաթևերը, հավասարաթևերը
3. – կարծրաթևերը, կիսակարծրաթևերը
4. – խավարասերները, ճպուռները

**5. Մալարիայի հարուցիչն է.**

1. – պլազմոդիումը
2. – ամեոբան
3. – տրիպանոսոմը
4. – ինֆուզորիան

**6. Լյարդը չի մասնակցում.**

1. - մարսողության գործընթացում
2. - արյան մեջ գլյուկոզի մակարդակի կարգավորմանը
3. - մարսողության ֆերմենտների առաջացմանը
4. - արյան սպիտակուցների առաջացմանը

**7. Առավել մեծ տեսակային բազմազանություն է դիտվում.**

1. – փշատերև անտառում
2. – տափաստանում
3. – կոռալյան խութերում
4. – բաց օվկիանոսի հասարակածային շրջաններում

**8. Երիկամների գլխավոր գործառույթն է.**

1. – ջրի հեռացումը օրգանիզմից
2. – միզանյութի հեռացումը օրգանիզմից
3. – օրգանիզմի հեղուկ միջավայրի կայունության ապահովումը
4. – արյան պլազմայի ֆիլտրումը

**9. Արյան մեջ առկա շատ են .**

1. – թրոմբոցիտները
2. – էրիթրոցիտները
3. – լեյկոցիտները
4. – լիմֆոցիտները

**10. Քաղցի կենտրոնը գտնվում է.**

1. – գլուղեղի ճակատային բլթերում
2. – երկարավուն ուղեղում
3. – մակուղեղում
4. – հիպոթալամուսում

**11. Արյան պլազմայի սպիտակուց է.**

1. – ալբումինը
2. – հեմոգլոբինը
3. – միոգլինը
4. – ացտոպրոպինը

**12. Բջջակենտրոնը և ցենտրիոլները անհրաժեշտ են.**

1. – բջջի բաժանման համար
2. – սպիտակուցի սինթեզի համար
3. – էներգետիկ փոխանակության համար
4. – բջջային թաղանթներ առաջացնելու համար

**13. Ո՞ր մոլեկուլների կազմի մեջ են մտնում ճարպաթթուները**

1. – պոլիսախարիդների
2. – սպիտակուցների
3. – նուկլեինաթթուների
4. – բոլոր պատասխանները սխալ են

**14. . Ո՞ր միացության մոլեկուլն է եռաշղթա.**

- 1.– ԴՆԹ-ի
- 2.– ՌՆԹ-ի
- 3.– կոլագենի
- 4.– ֆիբրինի

**15. Մեյոզի ո՞ր փուլում է տեղի ունենում հոմոլոգ քրոմոսոմների տարամիտումը.**

1. – առաջին բաժանման մետաֆազում
2. – երկրորդ բաժանման անաֆազում
3. – առաջին բաժանման անաֆազում
4. – երկրորդ բաժանման մետաֆազում

**Կարճ պատասխանով առաջադրանքներ**

Գետնամորու վարդագույն պտուղները (R) դոմինանտ են սպիտակների նկատմամբ (r): Գետնամորու վարդագույն պտուղներով հոմոզիգոտ սորտը խաչասերեցին սպիտակ պտուղներով հոմոզիգոտ սորտի հետ: F<sub>1</sub>- սերնդում ստացան 35 բույս, իսկ F<sub>2</sub> սերնդում՝ 412 բույս: *Պատասխանեք 16-20 հարցերին*

**16. Քանի՞ հետերոզիգոտ բույս էր ստացվել F<sub>1</sub> սերնդում:**

**17. Քանի՞ տարբեր ֆենոտիպեր կային F<sub>1</sub> սերնդում:**

**18. F<sub>2</sub> սերնդում քանի՞ բույս ուներ վարդագույն պտուղներ և տալիս էր չճեղքավորվող սերունդ :**

**19. F<sub>2</sub> սերնդում քանի՞ բույս ուներ վարդագույն պտուղներ և տալիս էր ճեղքավորվող սերունդ:**

**20. F<sub>2</sub> սերնդում քանի՞ տարբեր գենոտիպեր կային:**